| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 2 | Հոկտեմբեր | 2018 թ. |
| [4] Առաքման ամսաթիվ | | |
| 2 | Հոկտեմբեր | 2018 թ. |

# Հաշիվ ապրանքագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 0816240469 |

| Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |

| Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| | | |

| Պայմանագիր | |
|---|---|
| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| 18 Հունվար, 2018 թ. | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

| Արտադրանք, ապրանք առաքող անձի | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 6 9 0 2 0 8 7 |
| [9] Անվանումը | «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՑԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) |
| [10] Բանկային տվյալները | "ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ N 1570015001210100 |
| [11] Գտնվելու վայրը (հասցեն) | ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [12] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [13] Լրացուցիչ տվյալներ | |

| Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի | | |
|---|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 | |
| [15] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ | |
| [16] Բանկային տվյալները | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | N 900011000834 |
| [17] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | |
| [18] Լրացուցիչ տվյալներ | | |
| [19] Ում միջոցով | Անուն, ազգանուն | |
| | Լիազորագիր — Համար | |
| | Լիազորագիր — Ամսաթիվ | |
| [20] Մատակարարման (առաքման) եղանակը | | |
| [21] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | |

[22] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Արժեքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 55152218 բ/գ, | հատ | 1 | 39400 | 39400 |
| Ընդամենը | | | | | 39400 |

Առաքող՝ KALANTARYAN GAYANE 7203510093
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

02/10/2018 11:31:04

# ՈՐՈՇՈՒՄ

## Դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

10 օգոստոսի 2018թ. ք.Ալավերդի

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ա.Ս. Մնացականյանս, վերանայելով վարույթի թիվ 55152218 քրեական գործի նյութերը.

## ՊԱՐԶԵՑԻ

2018 թվականի մարտի 1-ին ժամը 15:55-ին Լոռու մարզի Չկալով գյուղի բնակիչ Վաչիկ Սերյոժայի Հակոբյանի և նույն օրը ժամը 22:30-ին Օֆիկ Վաչիկի Հակոբյանի կողմից ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնում տրված հաղորդումների վերաբերյալ նախապատրաստված նյութերով պարզվել է, որ 2018 թվականի մարտի 1-ին՝ ժամը 03:00-ի սահմաններում Օֆիկ Հակոբյանի նախկին ընկերը՝ Լոռու մարզի Վարդաբլուր համայնքի բնակիչ Աղվան Միշիկի Իսպիրյանը ալկոհոլի ազդեցության տակ գնացել է Լոռու մարզի Չկալով գյուղ՝ իր նախկին ընկերուհուն՝ Օֆիկ Հակոբյանին իր տուն տանելու նպատակով: Աղվան Իսպիրյանը հասնելով վերջինիս հայրական տուն և նախատանք ստանալով Օֆիկ Հակոբյանի հորից՝ Վաչիկ Հակոբյանից, բռնի կերպով վերջինիս կամքին հակառակ մտել է նրա տուն, որտեղ քաշքշել և ձեռքով մեկ անգամ հարվածել է Վաչիկ Հակոբյանի դեմքին: Այնուհետև տան մեջ փնտրելով և չգտնելով Օֆիկ Հակոբյանին՝ Աղվան Իսպիրյանը բռնի կերպով առևանգել է նրա անչափահաս դստերը՝ Էլեն Հակոբյանին և իր հետ տարել Լոռու մարզի Վարդաբլուր համայնք՝ նպատակ ունենալով Օֆիկ Հակոբյանի ստիպողաբար հետ բերել իր տուն: Նույն օրը ժամը 20:05-ի Լոռու մարզի Վարդաբլուր համայնքում Էլեն Հակոբյանը և Աղվան Իսպիրյանը հայտնաբերվել են և վերջինս բերման է ենթարկվել ոստիկանության Թումանյանի բաժին, որտեղ բացատրություն է տվել, որ Օֆիկ Հակոբյանի հետ ինքը ծանոթ է շուրջ 5 տարի և վերջինս ու նրա աղջիկը՝ Էլեն Հակոբյանը ժամանակ առ ժամանակ բնակվել են Լոռու մարզի Վարդաբլուր համայնքի իր տանը, սակայն շուրջ 2 ամիս է վերջիններս առանց իրեն տեղյակ պահելու հեռացել են իր տնից: Աղվան Իսպիրյանը իր բացատրության մեջ նշել է, որ ալկոհոլի ազդեցության տակ 01.03.2018 թվականին ժամը 03:00-ի սահմաններում Օֆիկ Հակոբյանին հայտնաբերելու և իր տուն բերելու նպատակով գնացել է վերջինիս հայրական տուն, սակայն այնտեղ նրան չգտնելով՝ նյարդայնացել է, քաշքշել Օֆիկ Հակոբյանի հորը՝ Վաչիկ Հակոբյանին, որից հետո տանը փնտրելով և չգտնելով Օֆիկ Հակոբյանին՝ մտածված կերպով առևանգել է վերջինիս դստերը՝ Էլեն Հակոբյանին և իր հետ տարել Լոռու մարզի Վարդաբլուր համայնքի իր տուն, որպեսզի Օֆիկ Հակոբյանը տեղեկանալով այդ մասին, ստիպված հետ վերադառնա իր մոտ:

Դեպքի առթիվ 2018 թվականի մարտի 02-ին ոստիկանության Թումանյանի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով հարուցվել է թիվ 55152218 քրեական գործը և այն նախաքննություն կատարելու համար ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժին:

2018 թվականի ապրիլի 23-ին որոշում է կայացվել Աղվան Իսպիրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին՝ այն բանի համար, որ նա 2017 թվականից շուրջ մեկ տարի փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնված նախկին կնոջ՝ Լոռու մարզի Չկալով գյուղի բնակչուհի Օֆիկ Հակոբյանի հետ միավորվելու և կրկին համատեղ ապրելու պատրվակով, 2018 թվականի մարտի լույս 1-ի գիշերը՝ ժամը 3-ի սահմաններում, ալկոհոլ օգտագործած վիճակում, գնացել է Օֆիկ Հակոբյանի բնակության՝ Լոռու մարզի Չկալով գյուղի 1-ին փողոցի 2-րդ տուն, որտեղ Օֆիկ Հակոբյանին տանը չհայտնաբերելուց հետո, նրան իր տուն գնալուն և իր հետ համատեղ ապրելուն պարտադրելու համար, բացահայտ առևանգել է այդ պահին տանը գտնված Օֆիկ Հակոբյանի անչափահաս՝ 11-ամյա դստերը՝ Էլեն Հակոբյանին և նրա կամքին հակառակ, բռնություն գործադրելով՝ նրան իր բնակության վայրից տեղափոխել է Վարդաբլուր գյուղ ու ժամեր շարունակ պահել իր տանը:

Նախաքննության ընթացքում Աղվան Իսպիրյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը և հայտարարվել հետախուզում:

Նախաքննության ընթացքում՝ 2018 թվականի ապրիլի 5-ին, կատարվել է անչափահաս տուժող Էլեն Հակոբյանի հարցաքննությունը, որի ընթացքում նա հայտնել է քրեական գործի համար նշանակություն ունեցող դեպքի հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ:

2018 թվականի ապրիլի 27-ին որոշում է կայացվել դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու մասին, որի կատարման ընթացքում փորձագետի կողմից միջնորդություն է ստացվել՝ փորձաքննության կատարման լիարժեքությունն ապահովելու նպատակով հոգեբույժ-փորձագետ ներգրավելու մասին:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ անչափահաս տուժող Էլեն Հակոբյանի կողմից դեպքի հանգամանքներն ընկալելու և վերարտադրելու ունակության և դրա հետ կապված մի շարք այլ հարցեր պարզաբանելու համար անհրաժեշտ են նաև դատական հոգեբուժության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55, 243-244 և 248 հոդվածների պահանջներով.

## ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲ ընկերության փորձագետներին:

2. Փորձաքննության ներկայացնել սույն որոշման օրինակը, թիվ 55152218 քրեական գործի նյութերը կներկայացվեն լրացուցիչ, իսկ անչափահաս տուժող Էլեն Հակոբյանին՝ փորձաքննության կատարման օրը:

3. Պարզաբանման համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը:

ա/ Անչափահաս Էլեն Հակոբյանը քրոնիկ հոգեկան կամ այլ հոգեկան հիվանդությամբ տառապել կամ տառապում է, թե ոչ, եթե այո ապա ինչպիսի:

բ/ Անչափահաս Էլեն Հակոբյանի մտավոր զարգացվածության աստիճանը համապատասխանում է իր տարիքային վիճակին, թե ոչ, եթե ոչ, ապա ինչով է դա պայմանավորված:

գ/ Կարելի է արդյոք արժանահավատ համարել անչափահաս Էլեն Հակոբյանի կողմից տրված ցուցմունքները:

զ/ Իր հոգեկան վիճակով պայմանավորված՝ Էլեն Հակոբյանն ի վիճակի է մասնակցել դատաքննչական գործողությունների, թե ոչ:

Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետների իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

1. Փորձագետներին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

**Հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ,**
**արդարադատության երրորդ դասի խորհրդական՝** **Ա.Մնացականյան**